**GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT**
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1500 • Fax: 818-242-4213

**Student Support Services**
Dr. Ilin Magran

# Դասերին հաճախելը կարևոր է

Օգոստոս 17, 2017

Հարգելի ծնող/ խնամակալ՝

Կալիֆորնիայում մեծ թվով աշակերտներ, ովքեր վատ են հաճախում դպրոց կամ վատ վարքագիծ են դրսևորում, դուրս են մնում դպրոցից: Ծնողները պետք է գիտակցեն, թե որքան կարևոր է իրենց դերը աշակերտների կանոնավոր կերպով դպրոց հաճախելու հարցում: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ողջունում է ազատ և արդյունավետ շփումը. այն է՝ հանդիպումներ դպրոցի ղեկավարության, ուսուցիչների, խորհրդատուների, ինչպես նաև *ծնողների կապի* միջոցով:

Աշակերտը դպրոցից հաճախակի բացակայող է համարվում, երբ նա ամսվա մեջ երկու կամ ավելի օր (դպրոցական օրվա 10%) չի մասնակցում դասերին: Միգուցե այդ երկու օրը շատ չի թվում, բայց իրար գումարվելով՝ դրանք շատանում են: Ամբողջ ուսումնական տարվա կտրվածքով՝ դա կարող է հանգեցնել մեկ բաց թողնված ամսի, որը կարող է կտրուկ կերպով ազդել ուսման վրա:

Երբեմն երեխաները հիվանդանում են: Այնուամենայնիվ, անգամ յուրաքանչյուր ամիս երկու օրը կարող է ազդել երեխայի ուսման վրա: Մանկապարտեզի և առաջին դասարանի աշակերտների դեպքում հավանականությունը մեծ է, որ երրորդ դասարանում նրանք կարդալ չեն կարողանա: Վեցերորդ դասարանում հաճախակի բացակայողները կարող են դուրս մնալ դպրոցից: Իններորդ դասարանում լավ հաճախելիությունը ութերորդ դասարանի գնահատականներից ավելի լավ կարող է հուշել, եթե աշակերտը կկարողանա ավարտել դպրոցը: Այլ կերպ ասած՝ կանոնավոր կերպով դպրոց հաճախելը կարևոր է:

Աշակերտը պետք է գտնվի իր տեղում, աշխատամասում կամ իրեն հատկացված վայրում և պատրաստ լինի առաջադրանքները կատարելուն յուրաքանչյուր դասաժամի սկզբում, որպեսզի ներկա համարվի: Եթե աշակերտը դասից ուշանում է 30 րոպե կամ ավել ժամանակով երեք տարբեր օրերին, ապա նրա մոտ գրանցվում է բացակայություն մեկ ամբողջ օրվա համար (օրինակ՝ 3 անգամ 30 րոպե և ավել ուշանալը = 1 բացակայության):

Կան շատ գործոններ, որոնք նպաստում են դպրոցում ունեցած հաջողություններին, սակայն կանոնավոր դպրոց հաճախելը և պատշաճ վարքագիծ դրսևորելը ամենակարևորն է, որպեսզի աշակերտներն ավարտեն դպրոցը: Մենք ցանկանում ենք օգնել ձեզ, եթե որևէ խնդիր ունեք, որի հետևանքով ձեր երեխան չի գալիս դպրոց: Միասին գործելով՝ մենք յուրաքանչյուր աշակերտի և ընտանիքի համար կարող ենք ճիշտ լուծում գտնել: Ձեր երեխայի կրթությունը կարևոր է մեզ համար:

Եթե որևէ հարց, մեկնաբանություն կամ մտահոգություն ունեք, խնդրվում է դիմել ձեր դպրոցի ղեկավարությանը: Նրանք կկարողանան օգնել ձեզ դպրոց հաճախելու հետ կապված ցանկացած հարցով:

Հարգանքներով՝

Դոկտոր Այլին Մագրան
Կրթական ծրագրերի համակարգող II